ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 10.04.2026թ. հ. 105-2026թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցի հ.2/1, Չարենցի թաղամասի հ.14 և Սայաթ-Նովայի թաղամասի հ.8 շենքերի նկուղներում կոյուղու և/կամ ջրի արտահոսք չկա: Այնուամենայնիվ, քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աշխատակիցների կողմից նշված հասցեների համատիրություններին նախազգուշացվել է իրենց կառավարման ներքո գտնվող շենքերի նկուղները պահել պատշաճ վիճակում՝ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան:

Աճառյան փողոցի հ.2/1 շենքի նկուղը պարբերաբար մաքրվում է համատիրության աշխատակիցների կողմից, սակայն բնակիչները նկուղ են թափում կենցաղային աղբ, ինչի հետևանքով ներկայումս նկուղն աղտոտված է: Մինչև աշխատանքային շաբաթվա ավարտը նկուղը կմաքրվի համատիրության կողմից:

Սայաթ-Նովայի թաղամասի հ.8 շենքի բնակիչների հետ տարվում են աշխատանքներ՝ նկուղն աղբից ազատելու ուղղությամբ:

Չարենցի թաղամասի հ.14 շենքի շքամուտքի աստիճանավանդակը տեխնիկապես հնարավոր չէ նորմերին համապատասխան թեքահարթակ կառուցելու համար:

Ավան վարչական շրջանի Չարենցի թաղամասի հ.14 շենքի հարակից այգու արտաքին լուսավորության հարցը քննարկվել է Ավան վարչական շրջանի ղեկավարի հետ և կներառվի առաջիկա ծրագրերում՝ այգու ամբողջական լուսավորությունն ապահովելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ